ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՁԻՐԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2011 թվականի N 13 -Ն　　　　　գ.Ձորակերտ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ հոդվածների դրույթներով՝

Ձորակերտի համայնքի ավագանին որոշում է.

Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ձորակերտի գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2012 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի :

Համայնքի ավագանու անդամներ՝　　　　Ա.Չափանյան　　　　կողմ

Վ.Մկրտչյան

կողմ

Լ.Էլբակյան

կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝　　　　Հ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

*16 Դեկտեմբերի 2011թ.*
*գ. Ձորակերտ*

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության*
*Շիրակի մարզի Ջրառատի գյուղական*
*համայնքի ավագանու 2011 թվականի*
*դեկտեմբերի 16 -ի N 13 -Ն որոշման*

# 1. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| | | |
|---|---|---|
| 1. | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծի համապատասխան՝<br>նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական), շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ | |
| | 1) հիմնական օբյեկտների համար՝ | |
| | ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական<br>և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ | մեկ հազար հինգ հարյուր դրամ |
| | 2) 1-ին կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝ | |
| | ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | երեք հազար դրամ |
| | բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | հինգ հազար դրամ |
| | գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | տաս հազար դրամ |
| | 3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝ | |
| | ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | հինգ հարյուր դրամ |
| | բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | մեկ հազար հինգ հարյուր դրամ |
| 2. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման,<br>արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ | |
| | 1) չի նախատեսվում կցակառույցների , վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետև-վանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ | հինգ հարյուր դրամ |
| | 2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքերի, գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա (բացի սույն կետի 1 ենթակետով | |

| | | |
|---|---|---|
| | սահմանված դրույքաչափի) կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով. | |
| | 3) նախատեսվում է միայն կցակառույցների , վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով,այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը: | |



| | | |
|---|---|---|
| 3. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ | մեկ հազար հինգ հարյուր դրամ |
| 4. | Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝ | |
| | 1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | երեք հազար դրամ |
| | 2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | հինգ հազար դրամ |
| 5. | Համայնքի տարածքում՝ | |
| | ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ | երեք հարյուր հիսուն դրամ |
| | բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ | երկու հարյուր հազար դրամ |
| 6. | Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ | հիսուն հազար դրամ |
| 7. | Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24-00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ | |
| | 1) առևտրի օբյեկտների համար՝ | քառասուն հազար դրամ |
| | 2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ | յոթանասուն հազար դրամ |
| | 3) բաղնիքների (սաունաների) համար՝ | երկու հարյուր հազար դրամ |
| | 4) խաղատների կազմակերպման համար՝ | հինգ հարյուր հազար դրամ |
| | 5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ | երկու հարյուր հիսուն հազար դրամ |
| | 6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ | մեկ հարյուր հազար դրամ |
| 8. | Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու | |

| | | |
|---|---|---|
| | թույլտվության համար 1 քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝ | |
| | 1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ | մեկ հազար դրամ |
| | 2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ | երկու հազար հինգ հարյուր դրամ |
| | 3) այլ արտաքին գովազդի համար՝ | մեկ հազար դրամ |
| | 4) դատարկ գովազդային վահանակների համար՝ | յոթ հարյուր դրամ |
| 9. | Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար, տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ | մեկ հազար դրամ |
| 10. | Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ | հինգ հազար դրամ |

2

2. ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| | | |
|---|---|---|
| 1. | Համայնքի տարածքում շինության կամ շինարարության, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց որպես փոխհատուցման վճար սահմանվում է ՝ | մեկ հազար դրամ |
| 2. | Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու համար որպես փոխհատուցման վճար սահմանվում է ՝ | մեկ հազար դրամ |
| 3. | Տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում, անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների փոխհատուցման վճար սահմանվում է՝ | մեկ հազար դրամ |
| 4. | Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճարը ամսական սահմանվում է՝ մեկ բնակչի համար՝ | հիսուն դրամ |
| 5. | Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճարը մեկ խորանարդ մետրի համար՝ | մեկ հազար դրամ |

Համայնքի ղեկավար՝ Հ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ՋՈՐԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

դեկտեմբերի 2011 թվականի թիվ 14 գ.Ջորակերտ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՈՐԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթով՝

Ջորակերտի համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջորակերտի համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ՝

Ա.Չափանյան կողմ

Վ.Մկրտչյան կողմ

Լ.Էլբակյան կողմ

Համայնքի ղեկավար՝ Հ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

*16 դեկտեմբերի 2011թ.*
*գ.Ջորակերտ*

*Հավելված*
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Զորակերտի համայնքի
ավագանու 2011թվականի դեկտեմբերի 16-ի
թիվ 14 որոշման

| h/h | Տարեթիվ | Գույքի անվանումը | Քանակ | Գին |
|---|---|---|---|---|
| 1 | 1986 | Ակումբի շենքը | 1 | - |
| 2 | 1976 | Քանդված կովանոցի պատեր | 1 | - |
| 3 | 1980 | Նավքամբերքի ցիստեր | 1 | - |
| 4 | 1965 | Ջրագիծ | 6,2կմ | - |



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԶՈՐԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2011 թվականի թիվ 15 գ.Զորակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 27-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով՝

Ջորակերտի համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջորակերտի գյուղական համայնք ղեկավարի վարձատրության չափը սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի աշխատավարձի նկատմամբ 33.3 տոկոսաչափով՝100000 դրամ, բարձր լեռնային հավելում 8000 դրամ՝ ընդամենը 108000 դրամ:

Համայնքի ավագանու անդամներ

| | |
|---|---|
| Ա. Չափանյան | կողմ |
| Վ.Մկրտչյան | կողմ |
| Լ.Էլբակյան | կողմ |

Համայնքի ղեկավար՝ Հ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

*16 դեկտեմբերի 2011թ.*
*գ.Ջորակերտ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ՋՈՐԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2011 թվականի թիվ 16 գ.Ջորակերտ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՈՐԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 55-Ա հրամանը՝

Զորակերտի համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զորակերտի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ՝ ՝ Ա.Չափանյան կողմ

Վ.Մկրտչյան կողմ

Լ.Էլբակյան կողմ

Համայնքի ղեկավար ՝ Հ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

*16 դեկտեմբերի 2011թ.*
*գ.Զորակերտ*

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զորակերտի համանյքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 16 -ի թիվ 16 որոշման*

*Զորակերտի համայնքի ղեկավարի աշխատակազմի թվաքանակը* -4

| h/h | Պ Ա Շ Տ Ո Ն Ը | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՏՈԿՈՍԱՉԱԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ԴՐԱՄ) | ԲԱՐՁՐԼԵՌՆԱՅԻՆ ՀԱՎԵԼՄԱՆ ՉԱՓԸ | ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ԴՐԱՄ) |
|---|---|---|---|---|---|---|

| | | | | | (ԴՐԱՄ) | |
|---|---|---|---|---|---|---|
| ՀՍՅԵՏՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ | | | | | | |
| 1 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1դրույք | 57 | 57000 | 8000 | 65000 |
| *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ* | | | | | | |
| 2 | Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտողար (թափուր) | 1 դրույք | 72 | 72000 | 8000 | 80000 |
| 3 | Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ | 1դրույք | 70 | 70000 | 8000 | 78000 |
| *ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ* | | | | | | |
| 7 | Հավաքարար | 1դրույք | 32.5 | 32.5 | 6500 | 39000 |

Համայնքի ղեկավար `                Հ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ՋՈՐԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 դեկտեմբերի 2011 թվականի թիվ 17 -Ն                g.Ջորակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՈՐԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և ,Հայաստանի

Հանրապետության բյուջետային համակարգի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով

Զորակերտի համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զորակերտի համայնքի 2012 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ՝ Ա.Չափանյան կողմ

Վ.Մկրտչյան կողմ

Լ.Էլբակյան կողմ

Համայնքի ղեկավար ՝ Հ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

*19 դեկտեմբերի 2011թ.*
*գ.Զորակերտ*

Հավելված
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԶՈՐԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19 -Ի ԹԻՎ 17 -Ն ՈՐՈՇՄԱՆ

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ (հազար դրամ)

| | |
|---|---|
| Հողի հարկ- | 1109.4 |
| Գույքահարկ- | 426.6 |
| Դոտացիա- | 3500.0 |
| Հողերի վարձավճար- | 2214.0 |
| ԸՆԴԱՄԵՆԸ- | 7250.0 |

Ծախսային մաս (հազար դրամ)

| | |
|---|---|
| Հոդված 4111 աշխատավարձ - | 4440.0 |
| Հոդված 4112 պարգևատրում - | 370.0 |
| Հոդված 4131 սոցվճար – | 940.0 |
| Հոդված 4212 էներգիայի վճար- | 50.0 |

Հոդված 4213 կոմունալ ծառայություն- 100.0
Հոդված 4214 կապ ծառայություն- 100.0
Հոդված 4221 գործուղումներ- 110.0
Հոդված 4234 տեղեկատվական ծառայություններ-60.0
Հոդված 4261գրասենյակային նյութեր- 50.0
Հոդված 4269 հատուկ նյութեր 150.0
Հոդված 4729 այլ նպաստներ 200.0
Հոդված 4823 պարտադիր վճարներ- 30.0
Հոդված 4891 պահուստային միջոցներ-650.0